

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագրերով նախատեսված 2020 թվականին կատարած աշխատանքների մասին

Ուղեցույց ունենալով համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագրերը, համայնքապետարանը, նրա աշխատակազմը որոշակի աշխատանք է կատարել 2020 թվականին նախատեսված խնդիրները լուծելու ուղղությամբ:

2020 թվականին համայնքի բյուջեի եկամուտները կազմել են 880944,147 հազար դրամ, իսկ միայն վարչական մասի եկամուտները կազմել են 738922,729 հազար դրամ:

Համայնքի բյուջեում վարչական բյուջեի սեփական եկամուտների գծով նախատեսված 357608,657 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքագրվել է 336.479.866 հազար դրամ, կատարողականը՝ 94,1 %:

Համայնքի 2020 թվականի բյուջեի ծախսերը տարեկան կտրվածքով կազմել են 853.838.046 հազար դրամ: Տեղական ինքնակառավարման ոլորտին ուղղվել է 171.681.534 հազար դրամ, մշակույթի և սպորտի ոլորտին՝ 159.189.689 հազար դրամ, բնակարանային կոմունալ տնտեսության ոլորտին՝ 124.868.527 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում, չնայած ֆինանսական միջոցների սակավությանը, այնուամենայնիվ համայնքապետարանը և նրա աշխատակազմը գործունեության կարևոր ուղղություն է համարել քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտները:

Ճանապարհաշինության և ճանապարհների պահպանման նպատակով 7461,1 հազար դրամ է ծախսվել համայնքի կենտրոնական համարվող փողոցների երթևեկելի հատվածների ընթացիկ և փոսային նորոգման համար: Իրականացվել է նաև ավագակոպձային խառնուրդով փողոցների հարթեցում:

2020 թվականի սուրվենցիոն ծրագրի շրջանակներում համայնքի Աթարբեկյան, Աբովյան, Իսակովի, Մարքս-Շիրվանզադե, Մարքս-Արազի 45 փողոցների, Օգոստոսի 23 փողոցի թիվ 41, 105, Մխչյան 119, Խարազյան 26, Արարատյան 3/1 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերում իրականացվել են բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ: Աշխատանքներն հիմնականում ավարտվել են: Կան որոշ չիրականացված աշխատանքներ, որոնք կավարտվեն մինչև 2021 թվականի հուլիս ամսին:

2020 թվականի ընթացքում գործունեություն է իրականացվել համայնքի ազգաբնակչության ապրելակերպը բարելավելու, պատշաճ սպասարկումներ և ծառայություններ իրականացնելու, նրանց առջև ծառայած խնդիրներին լուծում տալու ուղղությամբ: Համայնքի տարածքում տնկվել են ծառեր և թփեր: Մաքրվել է Արտաշատ համայնքի քաղաքային լճի հատակը տիղմից, կատարվել է կուտակված մասսայի տեղափոխում: Վերականգնվել ու վերանորոգվել են որոշ բազմաբնակարան բնակելի շենքերի առանձին հանգույցները՝ տանիքները, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերը, մուտքերի դռները, աստիճանավանդակները և նրանց բազրիկները:

Հաշվետու ժամանակաշրջանում հետևողական աշխատանք է կատարվել քաղաքի փողոցների, բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի լուսավորության համակարգի սպասարկման, անհրաժեշտության դեպքում նաև վերանորոգման և վերակառուցման ուղղությամբ: Այդ աշխատանքները կատարելու համար ծախսվել է 6549,194 հազար դրամ: Կառուցվել և վերակառուցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բակերում գործող խաղահրապարակները, զրուցարանները:

Համայնքի տարածքում աղբահանությունը պատշաճ կերպով կազմակերպելու, սանմաքրում իրակացնելու համար համայնքի բյուջեից ծախսվել է 71856,875 հազար դրամ: Ձեռք են բերվել ավտոմեքենաներ՝ բեռնատար-ՁԻԼ, ջրցան ՁԻԼ, բեռնատար ԿԱՄԱՁ, բեռնատար աղբատար ԿԱՄԱՁ, բեռնատար աղբաթափ ՄԱՁ ավտոմեքենաներ, որոն համար վճարվել է ավելի քան 23.633.0 հազար դրամ: Լիզինով ձեռք է բերվել GCP ամբարձիչ:

Հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 76 շինարարական թույլտվություններ, 102 ճարտարապետա-նախագծային առաջադրանքներ, քանդման 11 թույլտվություն: Տրվել է շինարարական ավարտական 16 արձանագրություն:

2020 թվականի ընթացքում առևտրի բնագառավում նախատեսված տարեկան տուրքի 13.073.0 հազար դրամի դիմաց գանձվել է 12.091.4 հազար դրամ: Գովազդների համար նախատեսված տարեկան տուրքի 5.500.0 դրամի դիմաց գանձվել է 3.213.135 հազար դրամ:

Մասնակի վերանորոգման են ենթարկվել համայնքային ենթակայության փողոցների, որոշ բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի լուսավորության ցանցերը: Օգոստոսի 23 փողոցի և Մրգավան համայնքի հատման հատվածում տեղադրվել է երթևեկությունը կարգավորող լուսաֆոր:

Հետևողական աշխատանք է տարվել համայնքի կանաչ տարածքների, ծաղկապատ գազոնների ստեղծման, մշակման, խնամքի և պահպանության ուղղությամբ:

Համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագրերի շրջանակներում 2020 թվականի աշխատանքային պլանի կատարմանը մեծապես նպաստել են նաև աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի, սոցիալական հարցերի և ծրագրերի բաժինները, որոնց կողմից կազմակերպվել են բազմաթիվ և բազմաբնույթ միջոցառումներ:

Կցվում է աշխատակազմի համապատասխան բաժինների կողմից տրված ոլորտային հավելվածների /հավելված թիվ 1, թիվ 2/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Կ.ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ

Հավելված թիվ 1

Արտաշատ համայնքի ավագանու  
2021թ.հունվարի 25-ի թիվ 10-Ա  
որոշման

Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և  
սպորտի բաժնի կողմից 2020 թվականի ընթացքում կատարված  
աշխատանքների.

- 2020 թվականի փետրվարի 13-ին Արտաշատի Սուրբ Հովհաննես եկեղեցում կազմակերպված Տեառնդառաջ տոնի ընթացքում ելույթ են ունեցել նաև համայնքային ենթակայության պարային խմբերը,
- Փետրվարի 19-ին՝ Հ.Թումանյանի ծննդյան օրը, ինչպես նաև „Գիրք նվիրելու,, օրվա կապակցությամբ համայնքային գրադարանին նվիրվեց բազմաբովանդակ գրքեր,
- Արտաշատ համայնքի մանկապարտեզներ հաճախող թվով 32 երեխայի տրվել են վարձավճարի արտոնություններ,
- Նշված ժամանակահատվածում կազմակերպվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստեր, կատարվել են տնային այցեր, կազմվել են արձանագրություններ, հետազոտական ակտեր և եզրակացություններ,
- Փետրվարի 23-ին Արտաշատի Ռ.Գոլեցյանի անվան մարզադպրոցում անցկացվել է սամբոյի մրցաշար, իսկ Մայիս-հունիս ամիսներին՝ „Սամբո,, մարզաձևի հեռավար մրցաշար, որտեղ հաջող են հանդես եկել Արտաշատի ներկայացուցիչները,
- Անցկացվել են շախմատի տարբեր մրցաշարեր, այդ թվում՝ հեռավար,
- Դեկտեմբերի 16-18-ը անցկացված ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի անհատական գավաթի առաջնությանը Արտաշատի Ռ.Գոլեցյանի անվան մարզադպրոցի սաներ Վ.Թևանյանը և Ա.Անդրեասյանը նվաճել են ոսկյա և բրոնզե մեդալներ,
- Ամանորի կապակցությամբ նվերներ են բաժանվել համայնքի սոցիալապես անապահով, հաշմանդամ երեխաներին:

ԿՄՍ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝



Ա.ԳՈԼԵՑՅԱՆ

Հավելված թիվ 2

Արտաշատ համայնքի ավագանու  
2021թ.հունվարի 25-ի թիվ 10-Ա  
որոշման

Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի  
սոցիալական հարցերի և ծրագրերի բաժնի 2020 թվականի կատարված  
աշխատանքների.

1. Բաժին մուտքագրվել է 408 դիմում, որոնցից 276-ին տրվել է դրական պատասխան:
2. Թվով 9 սոց. անապահով ընտանիքների հատկացվել է 383 000/երեք հարյուր ութսուներեք հազար/ դրամ արժողությամբ սգո պարագաներ:
3. Թվով 108 սոց. անապահով քաղաքացիների համայնքի բյուջեից հատկացվել է 2418000/երկու միլիոն չորս հարյուր տասնութ հազար/դրամ անհատույց դրամական միջոց:
4. COVID -19 համավարակի հետևանքով ինքնամեկուսացված անձանց, միայնակ տարեցներին, սոց. անապահով ընտանիքներին բաշխվել է թվով 1162 սննդի փաթեթ և հիգիենիկ պարագաներ :
5. Թվով 5 քաղաքացու տրամադրվել է տեղեկանք ընտանիքի սոցիալական վիճակի մասին, թվով 5 ուսանողների Արցախում պատերազմի հետևանքով տարհանվածներին օգնելու նպատակով կազմակերպված կամավորական աշխատանքներին մասնակցելու մասին:
6. Թվով 2 սոց, անապահով քաղաքացիների համայնքի ավագանու որոշմամբ տրվել է շինության գույքահարկի արտոնություն 3500/երեք հազար հինգ հարյուր/, հողի հարկի արտոնություն 27000/քսանյոթ հազար/ և ավտոմեքենայի գույքահարկի արտոնություն 16500/տասնվեց հազար հինգ հարյուր/ դրամի չափով:
7. Արցախյան ազատամարտի մասնակից 1-ին խմբի հաշմանդամի համայնքի ավագանու որոշմամբ մեկ տարի ժամկետով նշանակվել է ամենամսյա աջակցություն 20 000 /քսան հազար/ դրամի չափով:
8. 2020թ սեպտեմբերի 27-ին Արցախում սանձազերծված պատերազմում զոհված, վիրավորում ստացած զին. ծառայողների ընտանիքներին համայնքի ավագանու որոշմամբ տրվել է աղբահանության վճարի արտոնություն:
9. Թվով 5 սոց. անապահով ընտանիքների ՀԿ-ի կողմից հատկացվել է հագուստ:
10. Մարտի 8-ի Կանաչ միջ. օրվա առթիվ Արցախյան առաջին պատերազմում Արտաշատ համայնքի զոհված ազատամարտիկների այրիներին և մայրերին հանձնվել են նվերներ:

11. Մայիսի 9-ի՝ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի առթիվ 100 000/մեկ հարյուր հազար/ դրամ փոխանցվել է Արտաշատի ՀՊ վետերանների միավորմանը:
12. Պարբերաբար կատարվել է առցանց դիմումների , պարետատուն դիմած քաղաքացիների սոց. վիճակի վերաբերյալ ուսումնասիրություն և տվյալների ճշգրտում:
13. Թվով 200 ընտանիքների բաշխվել է բարերարի կողմից հատկացված սննդի փաթեթներ:
14. Կազմվել և ուղարկվել է թվով 73 գրություններ մարզպետարան, ՄԱՏԳ, ՄԱՊԾ, <<Առաքելություն Հայաստան>> ԲԿ, Ամո Խարազյանի անվ. պետ. դրամատիկական թատրոն:
15. ՀՕՖ-ի կողմից տրամադրված սննդի փաթեթները բաշխվել է թվով 16 սոց. անապահով ընտանիքների :
16. Կատարվել է Արցախում սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանվածների և Արտաշատ համայնքում բնակություն հաստատած ընտանիքների հաշվառում, կացարանի տրամադրում, գրանցամատյանի վարում և յուրաքանչյուր տեղահանված ընտանիքի վերաբերյալ անհատական հաշվառման թերթիկների լրացում:
17. Արցախից տեղահանված ընտանիքների 10- օրյա պարբերությամբ հատկացվել է սնունդ:
18. Կատարվել է կյանքին պատճառված վնասի դիմաց հատուցում ստանալու նպատակով Արցախյան երրորդ պատերազմում Արտաշատ համայնքի գոհված զինծառայողների փաստաթղթերի փաթեթի հավաքագրում, վիրավոր զինծառայողների տվյալների ճշգրտում, հաշվառում :
19. Արցախցի ընտանիքներ հյուրընկալած թվով 10 ընտանիքների <<Կանանց աջակցության կենտրոն>>-ի կողմից տրամադրվել է սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթ:
20. Արցախցիներ հյուրընկալած թվով 25 ընտանիքների տրամադրվել է էլ. էներգիայի վճարման կտրոններ յուրաքանչյուրին 10 000/տաս հազար/ դրամի չափով:
21. Թվով 125 արցախցի ընտանիքներին բարերարի կողմից տրամադրվել է դրամական աջակցություն , թվով 22ին՝ բժշկական խորհրդատվություն:
22. <<Առաքելություն Հայաստան>> ԲԿ-ի կողմից տրամադրված թվով 145 տաքացուցիչներ բաշխվել է թվով 124 ընտանիքի:
23. Թվով 37 արցախցի ընտանիքի հատկացվել է սննդի, հիգիենիկ և անկողնային պարագաների փաթեթ:
24. Թվով 20 արցախցի երեխաներին հատկացվել է ամանոբյա նվերներ:
25. Թվով 135 սննդի արկղեր հատկացվել են Արտաշատ համայնքի գոհված, վիրավոր զինծառայողների և Արցախից տաքհանված ընտանիքների:

26. Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում 15-օրյա պարբերականությամբ կատարվել է Արցախից տեղահանվածների վերաբերյալ տվյալների, տեղաշարժման ճշգրտում և ցուցակների կազմում հատկացված սննդի և հումանիտար օգնությունների բաշխման նպատակով:
27. Արտաշատ համայնքի թվով 17 գոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքներին հատկացվել է սննդի փաթեթ:
28. Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում կատարվել է Արցախից տեղահանվածների անհատական տվյալների, տեղաշարժման և սեռատարիքային կազմի վերաբերյալ տվյալների ճշգրտում:
29. Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով կատարվել է թվով 37 տուն այց:
30. Կազմակերպվել է ամանորյա հանդես Երևանում թվով 50 արցախցի երեխաների համար:
31. 10 վիրավոր զինծառայողներին հատկացվել է դրամական օգնություն:

ՍՀԾ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝



Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ